«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

18 նոյեմբերի, 2025 թ. N 26-L

ՈՐՈՇՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՅԼ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) հարկային և իրավական այլ հարցերի հանձնաժողովի կանոնադրության 7.1 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության հարկային և իրավական այլ հարցերի հանձնաժողովի 2026 թվականի գործունեության տարեկան ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակման պահից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **ՄԱՆՎԵԼ ՂԱԶԱՐՅԱՆ**

Հավելված
«Հայաստանի աուդիտորների և փորձագետ
հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության խորհրդի
2025 թ. նոյեմբերի 18-ի N 26 - L որոշման

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ»

հասարակական կազմակերպության

հարկային և իրավական այլ հարցերի հանձնաժողովի

2026 թվականի գործունեության տարեկան ծրագիրը

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) հարկային և իրավական այլ հարցերի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2026թ. գործունեության ծրագիրը (այսուհետ՝ Գործունեության ծրագիր) կազմվել է ի կատարումն Հանձնաժողովի կանոնադրության 7.1 կետի՝ նպատակ ունենալով ապահովել Հանձնաժողովի գործառույթների արդյունավետ իրականացումը և Պալատի խորհրդի կողմից Հանձնաժողովի գործունեության նկատմամբ արդյունավետ հսկողության իրականացումը:

ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Գործունեության ծրագրի հիմքում դրված են Հանձնաժողովի կանոնադրությամբ սահմանված ինչպես հիմնական («պարտադիր»), այնպես էլ այլ («ոչ պարտադիր») գործառույթները և նպատակները:

Գործունեության ծրագիրը կազմելիս նախատեսվող միջոցառումները և դրանց կատարման ժամկետները պլանավորվել են՝ ելնելով յուրաքանչյուր կոնկրետ գործառույթի բնույթից, նրա իրականացման նկատմամբ սահմանված պահանջներից և այն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներից:

Հանձնաժողովի կողմից այլ գործառույթների իրականացման համար կոնկրետ միջոցառումներ և ժամկետներ սահմանված չեն՝ դիտարկելով դրանք որպես ընթացիկ աշխատանքներ, որոնք կիրականացվեն ըստ անհրաժեշտության:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

h/h	Գործառույթ	Միջոցառում	Ժամկետ
1	Իրավական ակտերի և դրանց նախագծերի ուսումնասիրություն և առաջարկությունների ներկայացում և իրազեկում	Կուսումնասիրվեն ՀՀ պետական մարմինների կողմից մշակված հարկային, մաքսային, ինչպես նաև աշխատանքային և քաղաքացիական հարաբերությունները կարգավորող օրենսդրությանն առնչվող հարցերի վերաբերյալ իրավական ակտերը և դրանց նախագծերը և, ըստ անհրաժեշտության, կներկայացվեն առաջարկություններ	Հունվար-դեկտեմբեր: Առանձին իրավական ակտերի նախագծերի համար ժամկետ նախատեսված լինելու դեպքում՝ մինչև այդ ժամկետի ավարտը
2	ՀՀ ՖՆ և ՀՀ ՊԵԿ գործող, խորհուրդների	Կուսումնասիրվեն նիստերում քննարկվող հարցերը և (կամ)	Համապատասխան խորհրդի

	նիստերում քննարկվող հարցերի և (կամ) իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրություն և համապատասխան առաջարկությունների ներկայացում	իրավական ակտերի նախագծերը և կներկայացվեն համապատասխան առաջարկություններ՝ ինչպես գրավոր, այնպես էլ նիստերին մասնակցության միջոցով	կողմից նշանակված ժամկետներում
3	Շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների նախաձեռնում	Դասընթացների կազմակերպում՝ հանձնաժողովի անդամների կամ հրավիրված մասնագետների միջոցով	Յուրաքանչյուր եռամսյակ
4	«Կլոր սեղան» քննարկումների նախաձեռնում	Պալատի անդամների հետ հանդիպումների կազմակերպում ըստ անհրաժեշտության՝ առաջարկությունների փաթեթների մշակում (երկիմաստ կամ տարընթեռնելի ձևակերպումների վերաբերյալ), պատկան մարմիններին ներկայացնելու նպատակով	Յուրաքանչյուր եռամսյակ
5	Պալատի խորհրդի հանձնարարությամբ և Պալատի ներքին իրավական ակտերով նախատեսված այլ գործառույթներ	Միջոցառումներն ըստ անհրաժեշտության	Հունվար-դեկտեմբեր

Հարկային և իրավական այլ հարցերի

հանձնաժողովի նախագահ՝ Վահան Գրիգորյան